

**«ՆՈՐԲ» ՀԱՆԴԵՍԸ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Ա. Գ. ԿԱՍՊԱՐՅԱՆ

Սովետահայ գրականության սկզբնավորման ու ձևավորման տարիներին՝ 20-ական թվականներին, մեծ դեր վիճակվեց գրական մամուլին: Սա այն հիմնական օղակն էր, որում քննվում և լուծվում էին ժամանակի գեղարվեստական ստեղծագործության արմատական խնդիրները: Այդ խնդիրներից առավել կարևորներն էին՝ նոր գրականության զարգացման ուղիների հիմնավորումը և անցյալի գեղարվեստական ժառանգության նկատմամբ ունենալիք վերաբերմունքը: Բուռն կրքերով հագեցած ներգրական սլաքարը, փաստորեն, ծավալվում էր այս երկու խնդիրների շուրջը: Այդ կենսական ու սկզբունքային նշանակություն ունեցող հարցերը քննվում էին ոչ միայն գրական աղմկոտ ասուլիսներում և հրապարակային շեփորահանդեսներում, այլև լայնորեն արծարծվում էին ժամանակի գրական հանդեսներում: Գործունեության արդյունավետությանը, զավանած հայացքների լայնախոհությանը և ստեղծագործական ճիշտ դիրքերով Հայաստանի գրական լրագրության մեջ աչքի ընկնող դեր խաղաց «Նորք» հանդեսը:

«Նորքը» կյանքի կոչվեց 1922 թ. վերջերին, որպես գրական, գիտական ու քաղաքական, իսկ հետագայում՝ գրական, հասարակական ու քաղաքական հանդես և վերականգնման տարիներին հանրապետությունում լույս տեսնող մյուս պարբերականների համեմատությամբ, բավական տևական կյանք ունեցավ՝ ընդհուպ մինչև 1927 թ. ներառյալ, հրապարակի վրա թողնելով ութ ստվարածավալ գիրք¹.

«Նորքի» խմբագիրն էր Աշոտ Հովհաննիսյանը, հանդեսի խմբագրական կոլեգիայի կազմում տարբեր ժամանակներում եղել են Ասքանազ Մոսվյանը, Արտաշես Կարլինյանը, Եղիշե Չարենցը, Պողոս Մակինյանը: Նրանց հետ միասին «Նորքին» աշխատակցել են այնպիսի ականավոր գրողներ, գիտության մշակներ ու պետական գործիչներ, ինչպիսիք են՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, Հովհ. Թումանյանը, Մարտիրոս Սարյանը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Սարգիս Կասյանը, Հայկ Աղաաթյանը, Յուլիա Խանդադյանը, Լեոն և ուրիշներ:

«Նորքը» լայնորեն լուսաբանել է Հայաստանի տնտեսության, հասարակական-քաղաքական կյանքի ու մշակույթի ամենաբազմազան հարցերը: Դրան-

¹ 1922 թ., առաջին գիրք, 307 էջ:

1923 թ., երկրորդ գիրք, 320 էջ:

1923 թ., երրորդ գիրք, 363 էջ:

1924 թ., չորրորդ գիրք, 374 էջ:

1925 թ., հինգերորդ-վեցերորդ գիրք (միացյալ համար), 468 էջ:

1926 թ., առաջին գիրք, 265 էջ:

1926 թ., երկրորդ գիրք, 229 էջ:

1927 թ., առաջին գիրք, 277 էջ:

ցից էին՝ նորաստեղծ հանրապետության տնտեսական դարդացման հեռանկարները, Լեկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը, աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը, կուլտուրական շինարարությունը: «Նորբր» առանձնակի ուշադրություն էր դարձնում հայ արվեստի ու զրականության դարդացման կենսական խնդիրներին: Այս ասպարեզում նրա ավանդը չափազանց մեծ է ու արժեքավոր: Անցյալի զրական ժառանգության պաշտպանության մեջ «Նորբ» հանգեսի ունեցած ավանդի բնութագրությանն է նվիրված մեր հոգիվածը:

*

ՉՈ-ական թվականներին, հասարակական կյանքում կատարված պատմական հեղաշրջման հիմքի վրա, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում՝ գրականության տեսության մեջ հանգես և կան ծայրահեղ սխալ մոտեցումներ անցյալի կուլտուրական ժառանգության նկատմամբ: Սխալ ըմբռնելով նոր, պրոլետարական կուլտուրայի կառուցման ձևերն ու ևղանակները, Ռուսաստանում, ղեռ հեղափոխությունից առաջ ստեղծված Պրոլետկուլտի տեսարանները (Ա. Բոդյանով և ուրիշներ), հռչակում էին «ղտարյուն պրոլետարական արվեստը» և պահանջում՝ ամբողջովին խզել կապերը անցյալում ստեղծված պեղարվեստական ավանդներից:

Պրոլետկուլտի տեսակետներն արձագանք դտան նաև Հայաստանում, նորաստեղծ պրոլետարական գրական խմբակների գործունեության ու ղեկավարացիների մեջ:

Այսպես, «Նորհրդային Հայաստան» թերթի 1922 թ. հունիսի 6-ի համարում հրապարակվեց Ե. Չարենցի, Ի. Արուվի և Ա. Վշտունու համատեղ հայտարարությունը, որը հայտնի է «Երեքի ղեկավարացիա» անունով:

«Դուրս հանել բանաստեղծությունը սենյակներից ղեպի փողոցներն ու մասսաները և ղրքերից՝ ղեպի կենդանի խոսքը»: Սա «Դեկլարացիայի» հիմունքներից մեկն էր: Այս հարցում, անշուշտ, «Երեքը» կանգնած էր ճիշտ ղիրքերի վրա. նոր ղրագրությունը գրականության առաջ հեղափոխական նոր բուլանդակությանը համապատասխան ղեղարվեստական արտահայտման նոր ձևեր մշակելու պահանջ էր գնում: Բայց որքան ընդունելի էր «Դեկլարացիայի» այս սկզբունքը, նույնքան էլ մերժելի էր նրա մյուս՝ անցյալի կուլտուրայի արժեքներին վերաբերող սկզբունքը: Ինչպես «Դեկլարացիայում», այնպես էլ ղրա ողով ղրված հոգվածներում «Երեքը», կրկնելով Պրոլետկուլտին և ռուսական «ձախ» ֆուտուրիստներին, անանցանելի պատենշ էին քաշում դասական գրականության և նոր ստեղծվելիք պրոլետարական արվեստի միջև:

«Դեկլարացիայի» սխալ տեսակետների, ինչպես նաև այդ ղեղաղիտական հրովարտակի ողով ղրված բանաստեղծական ղրքերի ղեմ ՉՈ-ական թվականների մամուլի տարբեր օրգաններում հանգես և կան քաղաքական-հասարակական մի շարք գործիչներ ու գրականագետներ, ինչպես Ալ. Մյասնիկյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը, Պ. Մակինցյանը, Հ. Սուրխաթյանը, Յ. Խանդաղյանը, Տ. Հախումյանը և ուրիշներ: Նրանք քննադատեցին ղեղաղիտական նիհիլիզմի արտահայտությունները և ժամանակի համար անսուղոր լայնախոհությամբ պաշտպանեցին դասական գրականության լավագույն ավանդների ղարդացման հարցը:

«Նորք» հանդեսում տպագրվեց Աշոտ Հովհաննիսյանի ընդարձակ ու հանգամանալից հոդվածը Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մասին (1923 թ., երկրորդ գիրք)։ Դա ոչ միայն Թումանյանի մեծ ու անկրկնելի վաստակի գնահատությունն էր, այլև նրա պաշտպանությունը։ Հեղինակը հենց սկզբից Թումանյանին համարում է դրական ամենից շեն ու հաստատ օջախի ճրագ, որը «լուսավորում էր մինչև ժամյան հայ բանաստեղծական կուլտուրայի գագաթը»։ Այնուհետև նա գրում է. «...Ո՞ր հեղինակն է ավելի երկար ճանապարհ կտրել հայ Պառնասի ոլորտներում, քան լոռեցի պոետը։ Ժողովրդական պարզ առականներից մինչև խորախորհուրդ «Քառյակները», հովվական քարայրից մինչև Սիրիուսի բարձունքները։ Ինչե՞ր ասես չէր ղեղեցնում նրա միտքն ու ստեղծագործությունը»։

Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ Թումանյանի քնարում անդրադարձել է վերջին գարի հայ ժողովրդի հասարակական հոգեբանությունը։ Հոդվածում ընդգծվում է այն միտքը, որ համազգային ֆեբրոդի հուշակ վայելող Հովհ. Թումանյանը, նվագելով «հայոց վիշտը», չդարձավ նացիոնալիզմի երգիչն ու խնկարկուն, այլ աղգային-քաղաքական իր մտորումներում արտահայտեց ժողովրդական տենչերը, օրհներգեց գալիք օրերը, ջատագովեց անդրկովկասյան ժողովուրդների համերաշխության ու եղբայրության գաղափարը, անվերադարձ կողմնորոշվեց դեպի սովետական իշխանությունը։ Թումանյանը ժամանակի այն պայծառատես մտավորականներից էր, որ հասավ հեղափոխության տարերքի խոր ըմբռնմանը։

Հոգվածագիրը Հովհ. Թումանյանին համարում է Անդրկովկասի ամենախոշոր գրական դեմքը և ավելացնում. «Մեծ տաղանդը կախարդում էր փառալացի Թումանյանի փնարը։ Իսկ այսօր բանաստեղծ փառափառ մեծագործությամբ է սիսիստանակ, որ դարձնում է նրան հիացմունքի ու երախտագիտության առարկա»։

1923 թ. «Նորք» հանդեսի երրորդ գրքում տպագրվեց Ալեքսանդր Մյասնիկյանի (Ալ. Մարտունու) «Ա. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը» խորիմաստ հոդվածը։ Անդրադառնալով Հովհ. Թումանյանի ստեղծագործության դարգացման ընթացքին, հեղինակը վերլուծում է նրա առանձին գործերը և արժեքավորում դրանք մարքսիստական ուսմունքի դիրքերից։ Թումանյանին նա համարում է «ուժեղ և կատարյալ դյուցազներգակ»՝ համաձայնելով այն գրականագետների հետ, ովքեր Թումանյանին հայկական Հոմերոս պատվանունն են տալիս։

Նկատի ունենալով «Սասունցի Դավիթը», Մյասնիկյանը գտնում է, որ նրանում Թումանյանը ծառանում է բռնակալների, հարկահանների, բռնությունների, առհասարակ պատերազմների դեմ, հանդես է գալիս որպես ժողովուրդների խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի ջատագով, որպես համերաշխության երգիչ։ Թումանյանի առաքյալներն ու հեքիաթները տոգորված են խոր դեմոկրատիզմով և ունեն սոցիալական մեծ բովանդակություն։

«Մի կաթիլ մեղրը», — գրում է Մյասնիկյանը, — ծաղր է պատերազմի և իշխողների հասցեին, ցավակցություն գյուղացուն ու մշակին», «բայց ավելի մեծ ու տաղանդավոր ծաղր է «Քաջ Նազար» կոչված հեքիաթը»։ Մյասնիկյանը Թումանյանի «Քաջ Նազարը» համարում է նրա հեքիաթներից լավագույնը, ամենատաղանդավորը և հասարակական բովանդակության տեսակետից ամենաուսանելին։

Դառնալով «Գիրքորին», Մյասնիկյանն այն համարում է հայ գրականության սոցիալական, աշխատավորական և նույնիսկ պրոլետարական (բացառյալ Չարենցի հեղափոխական զրկածքները) բոլոր երկերից ամենաուժեղը, ամենաբովանդակալիցը և ամենաշնորհալին:

Մյասնիկյանը բարձր է գնահատում Թումանյանի «Երկու զրական բողոքները»՝ դաշնակցության փետրվարյան խռովության դեմ ուղղված նամակը և Վոլգայի ալաղանում տիրող սովի առթիվ քրքջացող հակահեղափոխականներին խարավանող «Սովից վատթարը» հոդվածը:

Վճռաբար դատապարտելով հրապարակ նետված այն տեսակետը, որով բացառվում էր Թումանյանի արդիական նշանակությունը, Մյասնիկյանը ամբողջ կրքով մեղադրում է նրա ստեղծագործության ժամանակակից լիթխարի արժեքը. «Թումանյանի արժեքը նրանում է, որ նա իր մեծ տաղանդով, ծառայեց աշխատավոր գյուղին և հաճախ տուրբան տվեց... կյանքի պատկեր: Սա է գրականը: Սա է, որ Թումանյանին դարձնում է մինչև ժամանակ հայ գրականության խոշորագույն դեմքը: Նրան կկարդան երկար տարիներ: Ապագա սերունդները նրան կսիրեն շատ ժամանակ»:

Ինչպես Աշ. Հովհաննիսյանի, այնպես էլ Ալ. Մյասնիկյանի հոդվածները սուղևտական թումանյանագիտության առաջին նշանակալից երևույթներն են:

Հետևողականորեն պաշտպանելով անցյալի դեմոկրատական գրականության ժողովրդական ավանդները օգտագործելու և դրանք պրոլետարական գրականության վարդապետական համար ելակետեր դարձնելու մարքսիստական տեսակետը, «Նորքը» խրատում է (1923 թ. երկրորդ գիրք) Հ. Սուրխաթյանի «Գրական գոհարները» (1922 թ. Թիֆլիս), որտեղ ընթերցողը հայ բանաստեղծների կողքին ծանոթանում է համաշխարհային գրականության այնպիսի խոշոր դեմքերի ստեղծագործությունների հետ, ինչպիսիք են՝ Հոմերոսը, Վիրգիլիոսը, Սոփոկլեսը, Շեքսպիրը, Ֆիրդուսին, Ռուսթավելին: «Գրական գոհարներում» ներկայացված պոեզիան ևս արժանանում է գրական գնահատության:

Գրա հետ միասին հանգեսն իր գրախոսականում լռությամբ չի անցնում Հ. Սուրխաթյանի արտահայտած գրականագիտական մի շարք տեսակետների կողքով, որոնց մեջ երևում են ժամանակի սխալ մտայնության արձագանքները: Գրախոսը ժամանակակից պոեզիայի զարգացման ընթացքի տեսակետից սխալ է համարում այն, որ «Գրական գոհարներից» Հ. Սուրխաթյանը դուրս է թողել հայ պոեզիայի մեջ կայուն տեղ գրաված մի ամբողջ շարք գրական ստեղծագործություններ՝ նրանց կպցնելով «կրոնական», «շովինիզմի կամ որևէ տենդենցիայի տարրեր պարունակող» պիտակներ: Գրախոսողը զարմանք է հայտնում, որ Սուրխաթյանը հայկական կոտորածների երգչին՝ Սիամանթոյին, որակել է իբրև «մանրբուրժուական ագրեսիվ նացիոնալիզմի և պաշտպանողական բարբարոսության երգիչ»: Ընդունելով, որ Պետրոս Դուրյանը գրել է նաև «ազգասիրական» երգեր, Հ. Սուրխաթյանը չակերտում է ազգասիրական բառը և այդ երգերը համարում գեղարվեստական արժեքից զուրկ: «Գրական գոհարների» գրախոսն առնվազն տարօրինակ է համարում նման ժխտական մոտեցումը և նկատում, որ եթե առաջնորդվենք Սուրխաթյանի տեսակետով, ապա պիտի հավաքենք բոլոր ազգասիրական գրքերն ու այրենք: Բայց չէ որ, դատելով այդպես, — շարունակում է իր միտքը գրախոսողը, — պիտի ոչնչացվի հայոց գրականության խոշոր մասը:

«Նորքը» անհանդուրժելի է համարում նաև այն, որ Սուրխաթյանը դեմոկրատական-հեղափոխական բանաստեղծ Ալ. Մատուրյանին համարում է «բառիս բուն իմաստով հայ քրիստոնյա», իսկ Թումանյանին՝ «հայ նահապետական իդիլիկ լինաշարհը զրական դուլներով սլատկերող»։ «Սա Թումանյանի ստեղծագործության կատարյալ անմեղությունն է», — եզրակացնում է հանդեսը։ Եվ իրոք, իհնչ «իդիլա» կարող են լինել «Լոռեցի Սաքոն», «Անուշը», «Մարոն», «Գուլթանի երգը», «Հառաչանքը», «Գիքորը»։ Այդ իհնչ «իդիլիկ աշխարհ է», — հարցնում է հանդեսը, — ուր մարդիկ սպանվում են, ինքնասպանություն գործում, խելագարվում, հեծում աղբատության ճիրաններում, ընկնում օտարության մեջ, զենք վերցնում»։

«Նորքը» կոնկրետ փաստերով հերքում է նաև Վահան Տերյանի մասին Սուրխաթյանի հայտնած կարծիքը, որի համաձայն կուսակցական ու պետական ականավոր գործիչ, հեղափոխության երգիչ Տերյանը ներկայացվում է որպես 1905 թ. հեղափոխությունից հետո մոլեգնող քաղաքական ռեակցիայի հետևանքով ինտելիգենցիայի որոշ խավի մոտ առաջացած հուստեսության ու լքման արտահայտիչ։

Դժվար է գերազնահատել «Նորքի» հանգամանալից, ուժեղ տրամաբանությամբ, տեսական խոր և ճշմարիտ ընդհանրացումներով հագեցած այս ելույթի նշանակությունը։ Այն նպաստեց ոչ միայն հայ գրականության և հատկապես պոեզիայի պատմության գիտական ուսումնասիրության համար որոշակի ու ճշմարիտ տեսակետ մշակելուն, այլև արժեքավորեց մեր անցյալի զրական ժառանգության նմուշները։ Այդ արժեքավորումը էական նշանակություն ունի մասնավորապես այն իրադրության մեջ, երբ տաքարյուն ու սնապարծ գրականագետները անխոհեմաբար բացառում էին Հովհ. Թումանյանի ու Բաքի, Վ. Տերյանի ու անցյալի մյուս գրողների արդիական նշանակությունը, նրանց սեղմում էին իրենց ժամանակի հոգեբանության նեղ կադավարներում։

Բացառիկ ջերմ վերաբերմունքով հանդեսը ուրախալի երևույթ համարեց 1923 թ. Փարիզում թարգմանաբար լույս տեսած «Վարդաստանը» («La Roseraie d'Armenie»)²։ Բանաստեղծ ու գրականագետ Արշակ Զուպանյանը, — ասում է հոդվածի հեղինակ Կոստան Զարյանը, — ճաշակով ընտրել, թարգմանել և ֆրանսիական ընթերցողին է ներկայացրել մեր միջնադարյան բանաստեղծության բոլոր այն կտորները՝ ներսես Շնորհալի, Մովսես Քերթոզ, Հովհաննես Թլկուրանցի, Նազաշ Հովնաթան և շատ ուրիշներ, որոնք անուրանալի շեղարվեստական արժեք ունեն, ուստի և կարող են հարստացնել միջազգային գրականությունը։

Քննադատաբար արտահայտվելով այն մարդկանց մասին, որոնք ամբողջովին, մինչև վերջ ժխտում էին միջնադարյան կուլտուրան, հեղինակը հատկապես շեշտում է, որ պետք է անցյալը՝ ավելի քան երբեք, ուսումնասիրել, լուսաբանել նոր աշխարհայացքով։ Նշելով, որ «Վարդաստան» ժողովածուն դարձավ տպագրական լավագույն պայմաններում կատարված բաղմալիվ արտանկարներով, հեղինակը ընդգծում է, որ դրանք հին հայկական ձեռագրերից վերցված մեր մանրանկարչության հանճարն ու օրինակներն են։

2 «Նորք», չորրորդ գիրք, 1924 թ.։

Իր 1925 թ. հինգերորդ-վեցերորդ միացյալ համարում «Նորքը» երիտասարդ, հեղափոխական էնտուզիստիկ տարված արվեստագետի կողմից անցյալի ժառանգությունը բացասելը, հայ մինչհեղափոխական պոեզիան «խլամ» հայտարարելը որակում է «քաջնաղարական խենթ արշավանք» և սլարգաբանում, որ դա սխալ աշխարհայացքի, արվեստի ու գրականության մասին Մարքսի, էնգելսի, Լենինի, Պլեխանովի, Լունաչարսկու հայացքները, կուսակցության քաղաքականությունը լավ չգիտենալու արդյունք է: Մատնացույց անելով «Արվեստն ու գրականությունը մարքսիստական լուսաբանությամբ», և «Գրականության մարքսիստական քրեատոմատիա» մամուլի տակից նոր դուրս եկած աշխատությունները (Մոսկվա), հանդեսը մեր գրողներին ու արվեստագետներին հանձնարարում է կարդալ, ուսումնասիրել դրանք, յուրացնել մարքսիստական տեսակետը արվեստի ու գրականության վերաբերյալ, ձեռք բերել մարքսիստական աշխարհայացք: Իր այդ ելույթում «Նորքը» մեկ անգամ ևս վկայակոչում է այն միտքը, որ քանիցս պարզաբանել է Լենինը. պրոլետարիատը պետք է օգտագործի հին կուլտուրայի բոլոր զանձերը, յուրացնի դրանք և իր նոր կուլտուրայի ստեղծման նպատակը դարձնի:

Հաջորդ համարում հանդեսը Հայաստանի երիտասարդ արվեստագետներին ու գրականագետներին խորհուրդ է տալիս անսլացման ծանոթանալ Գ. Վ. Պլեխանովի «XVII դարի ֆրանսիական թատերգությունը և նկարչությունը սոցիոլոգիայի տեսակետից» թարգմանաբար լույս տեսած աշխատությանը: Այդ աշխատության մեջ, ինչպես հանդեսն է նշում, մի ավելորդ անգամ ապացուցվում է, որ մարքսիստական մեթոդի կիրառմամբ միայն կարելի է բաղմակողմանի և կոնկրետ կերպով ըմբռնել գեղարվեստի այս կամ այն տեսակի ոչ միայն բովանդակությունը, այլև արտահայտության ձևը:

«Նորքը» սկզբունքային անաչառությամբ ծառանում է նաև այն էսթետների դեմ, ովքեր իրենց օրորում էին ցնորքներով, թե իբր արվեստն ու գրականությունը չեն կարող դասակարգային լինել, կապված չեն և ոչ մի դասակարգի հետ, վեր են կանգնած հասարակությունից: «Մաքուր արվեստի կողմնակիցները» գտնում էին, որ անցման շրջանում պրոլետարական գրականության առկայության մասին խոսելն անգամ ավելորդ է:

Այս իրադրության մեջ հրամայական անհրաժեշտություն էր լենինյան կուսակցականության դիրքերից մի շարք հարցերի հստակ ու որոշակի պատասխանել:

Ահա այդ հարցերը.

— Ի՞նչ ենք հասկանում պրոլետարական գրականություն ասելով:

— Ի՞նչ հիմք ու տվյալներ կան ենթագրելու պրոլետարական գրականության գոյությունը խորհրդային երկրի անցման շրջանում:

Ստանձնելով հիշյալ հարցերը պարզաբանելու խնդիր, «Նորքը» տպագրեց գրականագետ Տիգրան Հախումյանի հոդվածը՝ «Պրոլետարական գրականությունը և նրա տեղն ու դերը անցման շրջանի կուլտուրայի մեջ» խորագրով (1924 թ., չորրորդ գիրք):

Փաստերի տրամաբանությամբ և տեսական ընդհանրացումներով հեղինակն ապացուցում է, որ գրականությունն ու արվեստը դասակարգային բնույթ ունեն, հետևաբար, պրոլետարիատը ևս ունի իր դասակարգային գրականությունը, և այդ գրականությունը ոչ քե հեռավոր ապագայի աննշմարելի մշուշով է պարուրված, այլ առդեն կա, գոյություն ունի, նշմարելի է ու պրոլետարիատի

դասակարգային շահերին համապատասխան դեռ և կատարում՝ անցման շրջանում:

Հեղինակը միամիտ է համարում պրոլետարական գրականության նյութի ու առարկայի շրջանակները սահմանափակողներին, ծաղրում է նրանց, ովքեր պրոլետարոսներին «հրահանգում» էին շատ էլ չոլեորվել «ընդհանուր» խնդիրներով և զրել միայն մուշճի ու դործարանի, բրտինքի ու սուլիչի, ծխի ու մրի և «աշտմական» այլ նյութի մասին:

Մշակույթն ու գրականությունը պրոլետարիատի դասակարգային տկնոցը և դենքը պետք է դառնան՝ հանրային, մարդկային, համաշխարհային կյանքի արտացոլիչ և նրան նոր ընթացք տալու համար: Ահա այս է, ասում է հեղինակը, որ պրոլետարական գրականություն պիտի կոչվի:

Հողվածագիրն ընդգծում է պրոլետարական գրականության մեկ ուրիշ հատկանշական կողմ եւ՝ նրա մասնատված շնույթը: Սա նշանակում է, որ նոր գրականությունը մասսաներից ելած գրականություն է, ստեղծված՝ մասսաների համար: Պրոլետարական գրականությունը նա դիտում է ոչ միայն որպես կյանքի արտացոլիչ և պատկերող մի գործոն, այլև կյանքի կողմնակիցող հասարակական խոշոր մի ուժ: Հեռաբար, — ասվում է հողվածում, — այդ գրականությունը անցման դարաշրջանում պետք է կարողանա դաստիարակիչ դեր կատարել աշխատավոր մասսաների դադափարական կրթության գործում:

Հողվածն ավարտվում է պրոլետարիատի, նրա արվեստի ու գրականության հանդեպ խորին հավատով լիցուն հեռաբար պատկերավոր խոսքերով.

«Պրոլետարիատը կարող է և պետք է կերտի իր նոր արվեստը, իր նոր կուլտուրան, իր սոր գրականությունը և ցույց տա հանուր աշխարհին, որ իր մեջ է պարփակված ստեղծագործ այն հսկա ուժը, որ դարեր շարունակ եռացող կաթսայում փրփրալով, ալսոր էլել է իր ավերից՝ նախապատրաստիլու դալիք սոցիալիստական հասարակարգի և կուլտուրայի նախադրյալները» (էջ 284):

Հանդեսը նորից ընդգծում է այն միտքը, որ պրոլետարիատը զրան հասնիլու համար պետք է անշուղ կերպով կրթվի, ծանոթանա համաշխարհային գրականության գանձերին, յուրացնի անցյալի գեղարվեստական նվաճումները:

Տպագրելով Աշոտ Հովհաննիսյանի, Ալեքսանդր Մյասնիկյանի ուսումնասիրությունները, ինչպես նաև գրականագիտական հիշյալ և բազմաթիվ այլ նյութեր, «Նորքը» ոչ միայն զգաստացրեց 1917-ի սահմանագծից այն կողմ գտնվող գեղարվեստը բացասող բանաստեղծներին ու արձակագիրներին, նպաստեց սխալ ու վստահավոր տեղեկեցների հաղթահարմանը, այլև մատնանշեց այն ուղին, որով պետք է ընթանար նորաստեղծ սովետահայ գրականագիտությունը՝ հենարան ունենալով մարքսիստական գեղարվեստության սկզբունքները:

Հենց այդ սկզբունքներից ելնելով էլ հանդեսն իր էջերը լայնորեն բաց է տնում Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների առջև: «Նորք»-ում տպագրվում են Թումանյանի «Սիրիուսի հրաժեշտը», «Քառյակներ», «Անբուն կկուն», «Զվարթ երամով դուք եկաք ինձ մոտ» ստեղծագործությունները և «Սասունցի Դավիթ» պոեմի անտիպ «Բ» մասից մի հատված: Առաջին անգամ ընթերցողին ներկայացնելով «Անբուն կկուն» անավարտ և անտիպ երկը, հան-

դեմն ալն համարում է մի ստեղծագործություն, որը «այդ գրությունը էլ դե-
ղարվեստական արժեք է ներկայացնում և կարող է դասվել հայ գրականու-
թյան խոշորագույն գործերի շարքին»:

Հանդեսը լայն տեղ է հատկացնում նաև Վ. Տերյանի ստեղծագործություն-
ներին: Արդեն առաջին իսկ գրքում (1922 թ.) հանդեսը գետեզում է գրականա-
դետ Պ. Մակինցյանի ուսումնասիրությունը՝ «Վահան Տերյանի մահն ու մահեր-
դը» խորագրով:

Լինելով պոետի մտերիմն ու բնակերը, Պ. Մակինցյանը լավ էր ճանաչում
Տերյանին, քաջածանոթ էր նրա հոգեկան աշխարհին, ինչպես և նրա ստեղծու-
թյունները: Դեռևս չթողնած վավերագրերի ու դեպքերի թարմ տպավորու-
թյունների տակ Պ. Մակինցյանը բնթերցողին պատմում է պոետի հիման-
դրության մասին և ալն մասին, թե այդ հիմանդրությունը ինչ արձագանք է գտել
նրա պոեզիայի մեջ: Նա վեր է հանում Վ. Տերյանի կյանքի մի շարք մանրա-
մասներ, որոնք մինչ այդ անհայտ էին բնթերցող հասարակայնությանը: Հատ-
կապես ուշագրավ են ալն տեղեկությունները, որոնցից բնթերցողն իմանում է
Վ. Տերյանի կողմից վրացերեն լեզուն շատ կարճ ժամանակում սովորելու և
Շոթա Ռուսթավելու «Ընձենավորի» թարգմանության դժվարին գործին ձեռ-
նամուխ լինելու մասին:

Մի ուրիշ հոդվածում (1923 թ., երկրորդ գիրք) հանդեսն իրավացիորեն
նշում է, որ Վ. Տերյանը կյանքի վերջին շրջանում արդեն որոնում և գտնում էր
նոր օրերի, նոր երգերի համար նոր ձևեր: Դրանով հանդեսը ընդգծում է Տեր-
յանի ստեղծագործության ալն երանդները, որոնցում արտացոլվում է հեղա-
փոխությունը:

Վահան Տերյանի ստեղծագործություններին «նորբը» անդրադարձել է նաև
1923 թ. երրորդ և 1924 թ. չորրորդ գրքերում՝ դրախտելով բանաստեղծի եր-
կերի ժողովածուի առաջին, երկրորդ և երրորդ հատուկները: Գրախոսը գտնում
է, որ «Տերյանի կյանքն ու գրական վաստակը պետք է ավելի բնդարձակ և
խոր ուսումնասիրության արժանանան»:

1925-ին «նորբը» մեկ անգամ ևս անդրադառնում է Վահան Տերյանին,
այս անգամ ներկայացնելով նրան որպես քաղաքական գործչի, համառուսաս-
տանյան Կենտրոնական անգամի, ազգությունների ժողովմաթի հայկական
գործերի կոմիտարիատի պատասխանատու աշխատողի (Պ. Մակինցյան, —
«Լինինը և հայկական հարցը»): Տերյանին ներկայացնելով որպես նորը գղաց-
մունքներ արտահայտող պոետի և, միաժամանակ, քաղաքական բոցաշունչ
մարտիկի, հանդեսը գրանով իսկ շատ բանով ապահովեց տերյանական պոե-
զիայի անկաշկանդ շփումը ապագա սերունդների հետ:

Հայ գրականության դասական արժեքների պաշտպանությանը կոշված
«նորբի» հույթները, ինչպես և հանրապետության մամուլի որոշ օրդաններում
լույս տեսած նյութերը չէին կարող իրենց բարերար ազդեցությունը շունհայ
հասարակական կարծիքի վրա: Եվ իրոք, սովետահայ պոեզիայում շուտով
գիտակցվում է նախկին դիրքերի անկայունությունը, շրջադարձ է կատարվում
անցյալի ժառանգության դնահատման հարցում, այդ ժառանգությունը դիտ-
վում է որպես հուսալի պատվանդան հայ նորագույն պոեզիայի, սոցիալիստա-
կան ուսուցիչի գարգացման համար:

Հանդեսն իր էջերում մեծ տեղ է հատկացնում հեղափոխության երգիչ
նդիշ Չարենցի ստեղծագործություններին: Առաջին անգամ «նորբում» է շա-

րունակաբար լույս տեսել Չարենցի «Երկիր նաիրի» վեպը, որը խոշոր երևույթ էր հայ վիպագրության պատմության մեջ: Գրախոսելով Ե. Չարենցի «Երկրի ժողովածու»-ի երկու հատորները, «Նորքը» (1923 թ., երկրորդ գիրք) պոետին համարում է պատերազմի ու հեղափոխության ժամանակաշրջանի երգիչ և ընդգծում, որ «այդ շրջանը բերես Ռուսաստանի և ոչ մի պոետի գեղարվեստական ստեղծագործության մեջ այնպիսի պայծառ ու վառ արտահայտություն չի գտել. ուրիշ Զաքենցի երկերում»: «Ընթերցողն առաջին անգամ «Նորքի» էջերից է ծանոթացել Դ. Դեմիրճյանի «Քաջ Նաղար» կատակերգությանը, որը իրավամբ կարելի է դասել համաշխարհային երգիծական գրականության գանձարանում:

«Նորքում» կարելի է հանդիպել 20-ական թվականների սովետահայ գրեթե բոլոր գրողների ստեղծագործություններին: Հանդեսը իր էջերը հատկացնում էր ամենից առաջ այնպիսի ստեղծագործությունների, որոնք արտացոլում էին հայ գեղարվեստական արձակի ու պոեզիայի ժողովրդական բնույթը, պահպանում ու զարգացնում էին մեր հինավուրց կուլտուրայի լավագույն ավանդույթները, նպաստում սոցիալիստական ուսուցիչի գեղարվեստական մեթոդի ձևավորմանը: Հանդեսում տպագրված բազմաթիվ ստեղծագործություններում գեղարվեստական արտացոլում են գտել ազատագրված, լուսավոր ուղի բռնած Հայաստանը, մենոռ ու ժերի և պատմության թատերաբեմ ելած աշխատավոր մասսաների հակասությունները, որոնցում հառնում է նոր մարդը իր նոր մտածելակերպով, նոր խոհերով ու հոգեբանությամբ:

Գրականության և արվեստի հարցում «Նորքի» դավանած ուղղությունը բխում էր կոմունիստական կուսակցության քաղաքականությունից և վ. ի. Լենինի այն ցուցումից, թե պրոլետարական կուլտուրան պետք է լինի օրինաչափ զարգացումը գիտելիքների այն պաշարի, որը մշակել է մարգկույտներ կապիտալիստական հասարակության, կալվածատիրական հասարակության, չինովնիկական հասարակության ճնշման տակ և որ այդ բոլոր ուղիներն ու շառավիղները բերել են, բերում են և շարունակում են բերել դեպի պրոլետարական կուլտուրան³:

3 Լենին, Երկեր, հ. 31, էջ 348: